

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԻ

ՆԵՐՔՈՂ-ՅԱՆԵԼՈՒԿ՝ ՍՐԲՈՑ ԹԱՐԳԱՆՉԱՅՆ ՈՒ ՅԱՅՈՑ զՐԵՐԻ ԱՐԱՐՄԱՆԸ¹

Նոգվածում քննվում է հայոց գրավոր առաջին հանելուկաշարը, որը նվիրված է գրին: Հ. Ղեւոնդ Ալիշանը, Մկրտիչ էմինն այն հրատարակել են ձեռագրերում առկա ընդհանրական խորագրերով՝ «Իմաստութիւն Դաւթի Քերթողի», «Դաւթի Փիլիսոփայի Իմաստութիւն»՝ ենթագրելով, որ հեղինակը Ե.—Զ. դարերում ապրած Դավիթ Անհաղթն է կամ որ նույնն է՝ Դավիթ Քերթողը²: Ուսումնասիրությունը կատարվել է Ա. Մնացականյանի կազմած բնագրի հիման վրա³, որի ձեւակառուցվածքային հատկանիշները թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել հանելուկի իմաստասիրական բնույթի, գաղափարական նպատակադրման մասին: Հոգվածում մեկնաբանվում է հանելուկը տող առ տող՝ այլաբանական շերտերը վեր հանելու միտումով: Ցույց է տրվում, որ հանելուկի հեղինակը, գիրը համարելով աստվածատուր պարգեւ, արժեւորում է այն՝ իբրեւ սրբագործված երեւույթի, ինչի շնորհիվ հանելուկը վերածվում է յուրօրինակ ներբողյանի, ինչպես Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը:

Հայ գրի գյուտը Ե. դարի սկզբին շրջադարձային երեւույթ դարձավ Հայաստանի համար: Սկսվեց լուսավորական լայնածավալ գործունեություն: Այն հայացրեց եկեղեցական կարգերն ու արարողությունները, հայերեն քարոզների միջոցով ամրակայեց քրիստոնեության գաղափարախոսությունը, բարձրացրեց մարդկանց գրագիտության մակարդակը: Քաղաքական իրադարձությունների պայմաններում, որոնք զարգանում էին

¹* Ստացվել է 15.11.2022, գրախոսվել է 14.12.2022:

էլ. հասցե՝ vorskanyan.heriknaz@mail.ru:

² «Բազմավէպ», Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1848, թիւ 12, էջ 192: МОИСЕЙ ХОРЕНСКИЙ, История Армении, М., 1858, էջ 369. Հանելուկների հրատարակման պատմությունը հանգամանորեն տես Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Հայ միջնադարյան հանելուկներ (V—XVIII դդ.), Երեւան, 1980, էջ 15—34:

³ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 171—174:

ի վնաս հայոց պետականության, հնարավոր եղավ զարգացնել մշակույթն ու գիտությունը, Հայոց Եկեղեցին դարձնել ինքնուրույն ու անկախ:

Ակադ. Ա. Հովհաննիսյանը, անդրադառնալով մաշտոցյան գրերի պատմական նշանակությանը, գրի ստեղծման հանգամանքներն ու շարժառիթները բացատրում է նախ եւ առաջ քրիստոնեությունն ամրապնդելու միտումով, որպեսզի վերջինս իր հերթին միջոց լիներ Եկեղեցու գաղափարական ազդեցության տարածման համար: Գիտնականն այս եզրակացությանն է հանգում՝ հենվելով գրերի գյուտին մոտ հնագույն աղբյուրների վրա՝ Կորյուն, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի, որոնք «հայ ժողովրդի պատմության շրջադարձային այդ ձեռնարկության շարժառիթը տեսնում են Հայաստանում նոր կրոնն արմատավորելու պահանջի մեջ»⁴: Ըստ գիտնականի՝ հոգեւոր-մշակութային կրթությունն է, որ բարձրացնում է հայ ժողովրդի ազգային-քաղաքական ինքնագիտակցությունը եւ նպաստում նրա քաղաքական համախմբմանը⁵:

Ս. Արեւշատյանը գրում է, որ Մեսրոպ Մաշտոցի՝ հայոց գրերի գյուտը, թելադրված պատմական իրավիճակով, երկրի ու ժողովրդի կենսական շահերով, միանգամայն գիտակցված էր, բայց այդ արարքը, ըստ նրա, միջնորդված էր Եկեղեցու եւ կրոնի կարիքներով, որոնց միջոցով, ժամանակակիցների խոսքերով, հնարավոր եղավ ճաշակել «իսկական իմաստությունը եւ լույսը», «ճանաչել իմաստությունը եւ խրատը, հասկանալ բանական խոսքը»⁶:

Ա. Դոլուխանյանը, ներկայացնելով եւրոպացի հայագետների ուսումնասիրությունները Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց այբուբենի մասին, նկատում է, որ նրանք անվերապահորեն Մեսրոպ Մաշտոցի կատարածը համարում են գիտական խիզախում. հայոց այբուբենի ստեղծումով հայերն ունեցան այն արդյունքը, «որ անշատվեցին ընդմիշտ Արեւելքի մյուս ազգերից, դարձան զատված մի ազգ՝ ամուր քրիստոնեական հավատով»⁷:

Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը եւ նրանց աշակերտները նախ եւ առաջ ձեռնամուխ եղան Եկեղեցու գաղափարական ազդեցությունն

⁴ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը, «Պատմաբանասիրական հանդես», №2, Երեւան, 1962, էջ 4:

⁵ Անդ, էջ 7:

⁶ ՏԷՄ Ս. ԱՐԵՎՏԱՏՅԱՆ, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 2016, էջ 39:

⁷ Ա. ԴՈԼՈՒՃԱՆՅԱՆ, Եւրոպացի հայագետները Մաշտոցի եւ հայոց այբուբենի մասին, 2005, Ս. էջմիածին, էջ 22, 90:

ու ազգի ինքնագիտակցությունը թարգմանական գրականության միջոցով բարձրացնելուն: Դրան զուգահեռ ստեղծվեց ազգային մատենագրությունը, որի առաջին գործերից մեկը՝ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, նվիրված էր հայոց գրերի գյուտին. Կորյունի եւ շատերի⁸ համար արդեն ընկալելի էր ամենագոր գրի նշանակությունը հայոց կյանքում, տեսանելի էր ժողովրդի մտավոր եւ հոգեւոր վերածնունդը:

Կորյունն իր առջեւ նպատակ էր դրել համառոտ ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կենսապատումը, գրել միայն սուրբ հայրերի կատարած գործերի կարեւորագույն հանգամանքները՝ որպես քաջալերիչ օրինակներ իրենց հոգեւոր զավակներին⁹: Անհրաժեշտ էր ցույց տալ, որ գիրը հայոց «երանելի եւ ցանկալի» աշխարհին հրեշտականման առաքիլն էր կրոնավոր մարդու ձեռքով տրված երկնային պարգև էր:

«ԶԱզքանազեան Ազգին եւ զՀայաստան աշխարհին զաստուածապարգև գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ եւ որպիսի արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ...»¹⁰,— այսպիսի տողերով է սկսում իր պատումը Կորյունը՝ Աստվածաշնչում հիշատակվող Ասքանազյան վերադիրով ի ցույց դնելով հայոց ազգի կազմավորման ակունքները, ապա Մեսրոպ Մաշտոցին ընծայված աստվածեղեն շնորհը՝ գրերի գյուտը, դիտարկելով իբրեւ աստվածային կամքով նախասահմանված իրողություն:

Ուսումնասիրողներից շատերը Կորյունի գիրքը գնահատել եւ արժեւորել են մասնավորապես իբրեւ գովաբանական պատում՝ անշուշտ ընդունելով նկարագրված իրադարձությունների պատմական հավաստիությունը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Կորյունը գրել է գովաբանական կենսագրություն, որով անմահացրել է ուսուցչի կատարած մեծ գործի պատմությունը¹¹:

Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքով՝ պատմական վավերականություն ունեցող «Վարք»-ը, ըստ էության, ներբողյան է, քանի որ գրվել է ներ-

⁸ Կորյունն իր «Վարք»-ի առաջաբանում նշում է, որ Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը գրել է նրա աշակերտների քաջալերությամբ, մասնավորապես հրամանով «առն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ»: Տե՛ս «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ Թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին», Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1994, հտ. Ա., էջ 83:

⁹ Անդ., իԹ., էջ 106:

¹⁰ Անդ., Ա., էջ 83:

¹¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ., Երեւան, 1968, էջ 171:

բողջանի՝ «Պիտոյից գրքում» սահմանված ճարտասանական կանոնների հետեւությունը, եւ նրա «կետ նպատակն է գովերգել, փառաբանել մեծ Վարդապետին ու նրա անբաղդատելի հոգեւոր սխրագործությունը»¹²:

Քն. Տեր-Դավթյանը նույնպէս համակարծիք է, որ Կորյունի նպատակն է եղել իր ուսուցչի եւ նրա գործի մասին պատմել գովաբանական ոճով: Նա վկայակոչում է Կորյունի բառերը՝ «յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել»¹³:

Ա. Ղազինյանը գրում է, որ որոշ վերապահմամբ՝ հայ առաջին ներբողագիր պետք է համարել Կորյունին: Նրա «Վարք Մաշտոցի» երկը ժանրային առումով մոտենում է ներբողին, բայց չի նույնանում¹⁴:

Կորյունին հաջորդող մատենագիրները որդեգրում են նրա ըմբռնումը աստվածապարգեւ գրերի գյուտի առնչությամբ, եւ ժանրային տարաբնույթ ստեղծագործություններում՝ պատմագրության շրջանակում, չափածոյում, ներբողական-քարոզխոսական, դավանական եւ մեկնաբանական գրականությունում, քերականական մեկնություններում, գովերգվում է հայոց գիրը՝ որպէս Աստծու տված պարգեւ, փառաբանվում են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու նրանց աշակերտները¹⁵: Հեղինակից հեղինակ, դարից դար ավելի ու ավելի է շեշտվում գրի աստվածային լինելու հանգամանքը, բայց որոշակի փոխակերպումներով:

Կորյունը գրում է, որ Աստված պարգեւեց գիրը Մեսրոպ Մաշտոցին՝ վերջինիս՝ ազգին մի բարի օգնություն գտնելու համար շատ նեղություններ կրելուց, աղոթքներից ու տքնություններից, արտասովալից պաղատանքներից հետո, եւ Մեսրոպ Մաշտոցն իր սուրբ աշով ծնեց հայերեն լեզվի նշանագրերը¹⁶:

Մովսէս Խորենացին գրի արարումն ուղղակիորեն կապում է հրաշքի հետ. այն տրվել է Մեսրոպ Մաշտոցին աղոթքի մեջ՝ իբրեւ տեսիլ. հոգու աչքերին երեւացել է Աստծու Աջը քարի վրա նշանագրերը գրելիս այն-

¹² Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ, «Վարք Մաշտոցի» ժանրը եւ պատմագրական նշանակությունը, «Բանբեր Մատենադարանի», 7, Երեւան, 1964, էջ 49:

¹³ Քն. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ, Հայկական սրբախոսություն, Վարքեր եւ վկայաբանություններ (V–XVIII դդ.), 2011, Երեւան, էջ 79:

¹⁴ «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», Երեւան, 1984, էջ 149:

¹⁵ Տէն «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», աշխ.՝ Հակոբ Քյոսեյանի եւ Վարդան Դերիկյանի, 2019, Երեւան:

¹⁶ ԿՈՐԻՒՆ, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ը., էջ 90:

պես, որ մնացել են հետքերը, ինչպես ձյան վրա¹⁷: Աղոթքից հետո Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է տառերը՝ «հավաքելով» դրանք իր սրտի գործարանից:

ԺԱ.—ԺԲ. դարերից սկսած՝ տարածում է գտնում գրերի գյուտը Հայաստանում՝ Բալու լեռան վրա գտնվող մի այրում կատարված լինելու մասին ավանդազրույցը¹⁸, որ ձգվում է մինչև ԺԹ. դար՝ իբրեւ պահպանված թանկ մասունք տեղ գտնելով Գարեգին եպս. Սրվանձտյանցի «Ուղեգրութեան» մեջ¹⁹: Գրերի գյուտի պատմությունը ենթարկվում է ազգային-հոգեւոր վերամեկնաբանման: Այս կապակցությամբ Ս. Մարգարյանը նկատում է, որ ոչ միայն տեղայնացվում է նշանագրերի ստեղծման օրրանը, այլև Աստծու մեծագույն շնորհի վայրը ներկայացվում է իբրեւ հայրենիքի ու հայկականության խորհրդանիշ²⁰:

Վերախմբագրման է ենթարկվում նաեւ տեսիլի պատմությունը: Դա, ըստ Վ. Դեւրիկյանի, պայմանավորված է հայոց գրերի աստվածատուր լինելն առավել հստակ եւ առարկայորեն ներկայացնելու ձգտմամբ²¹: Եթե Կարապետ Սասնեցին (ԺԱ.—ԺԲ. դդ.) հետեւում է Մովսես Խորենացուն՝ գիրը տրվել է աստվածային տեսիլով, Մեսրոպ Մաշտոցը սրտի գործարանից դրոշմել է քարի վրա Բալուի այրում, ապա Վարդան Արեւելցին (ԺԳ. դ.) գրում է, որ Աստված Ինքն է Իր Աջով դրանք դրոշմել այրի վեմին²²: Վերախմբագրման է ենթարկվում նաեւ Մովսես մարգարե — Մեսրոպ Մաշտոց գուգահեռն այն շեշտագրությամբ, որ երկուսին էլ գիրը տրվել է բարձունքում՝ լեռան վրա: Նոր հայեցակետ է ձեւավորվում Մեսրոպ Մաշտոցի ստեղծած տառերի քանակի շուրջ²³:

Եթե դիտարկենք հայոց գրավոր առաջին հանելուկն այս համապատկերում, ապա նրանում գրի աստվածային հայտնության վերաբերյալ մտահայեցողությունն սկիզբ է առնում ուղղակիորեն Կորյունի գրքից.

¹⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քնն. բնագ. եւ ներած.՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահան.), 1991, Երեւան, Գիրք երրորդ, գլ. ԾԳ., էջ 327:

¹⁸ ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՍԱՍՆԵՅԻ, Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան, Ս. էջմիածին, 1897:

¹⁹ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՍՐՎԱՆՁՏԵԱՆՅ, Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մասն Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 154—166:

²⁰ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Գարեգին եպս. Սրվանձտյանցը եւ գրերի գյուտի՝ Բալուի ավանդությունը: Տէս «էջմիածին», 2021, ԺԲ., էջ 104:

²¹ Տէս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 29:

²² «Բանբեր Մատենադարանի», 1964, №7, էջ 379:

²³ Տէս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 30—34:

որեւէ վերախմբագրման հետքեր չկան: Մեր ուշագրությունից չվրիպեց այն հանգամանքը, որ եթե գրական տարբեր ժանրերում գեղարվեստորեն պատկերվել են Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի, Վռամշապուհի կերպարները, ապա Ե.—ԺԸ. դարերում ստեղծված հանելուկները պարունակած նյութի շրջանակում վերաբերում են միայն գրին ու գրքին, գրչության արվեստին:

Ա. Մնացականյանն առանձնացնում է երկու անխորագիր հանելուկ, որոնք, իր կարծիքով, նվիրված են Սահակ Պարթևին եւ Մեսրոպ Մաշտոցին²⁴: Սակայն հարգարժան գիտնականի վերագրումները դեռեւս հիմնավորման կարիք ունեն:

Մեսրոպ Մաշտոցի կերպարը գծագրված չէ նաեւ քննվող հանելուկում: Փոխարենը հանելուկի ժանրին բնորոշ այլաբանությամբ խոսում է գիրն իր անունից՝ առաջին դեմքով:

Գրի անձնավորման բանաստեղծական պատկերի հիմքում ընկած է գրի սրբագործումը: Քրիստոնեության ամրապնդման առաջնային նախադրյալներից մեկը մարդկանց համար ընկալելի եւ ընդունելի դարձնելն էր նոր ըմբռնումները, աշխարհայացքային փոփոխությունները: Քրիստոնեության պատվարը նախ եւ առաջ եկեղեցին էր, որը համարվել է աստվածային շնորհ: Եղիշեն գրում է. «Այլ եկեղեցիք ոչ են պարգեւք թագաւորաց, եւ ոչ արուեստ ճարտարութեանց, եւ ոչ գիւտք իմաստնոց, եւ ոչ աւար քաջութեան զինուորաց, եւ ոչ պատիր խաբէութիւնք դիւաց, նա եւ բնաւ իսկ ամենեւին զինչ եւ ասասցես յերկրաւորացս, կամ ի վեհից կամ ի վատթարաց, բնաւ ուրեք եկեղեցի ի նոցանէ ոչ գտցի: Այլ շնորհք են մեծին Աստուծոյ, ոչ միում ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց, որք վիճակեալք են ի բնակութիւն ի ներքոյ արեգականս»²⁵:

Բայց Հայաստանում 301 թվականից իբրեւ պետական կրոն հռչակված քրիստոնեությունը դեռ դժվարին ճանապարհ էր անցնում: Պատճառները տարբեր էին: Նախ՝ քրիստոնեությունը բերում էր նոր արժեհամակարգ, որի ազդեցությունը մարդկանց վրա ամփոփ արտացոլվում է Ս. Զաքարյանի բնութագրման մեջ. «Կրոնական նոր հավատքը փոխում է մարդկանց զգացական ու մտավոր աշխարհի բովանդակությունն ու

²⁴ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 132—133:

²⁵ ԵՂԻՇԵ, Վարդանի եւ հայոց պատերազմի մասին, թարգմ. եւ ծանոթ.՝ Ե. Տեր-Մինասյանի, Երեւան, 1989, էջ 94:

ուղղվածությունը, ձեւավորվում է մի աշխարհայացք, որում երկրային, բնապաշտական արժեքների փոխարեն հիմնականում են դառնում երկնային, հոգեւոր արժեքները: Մարդու կյանքի իմաստն ու նպատակը վերաիմաստավորվում են, ժամանակը շրջապտույտայինից վերածվում է գծայինի եւ հոսում ապագայից դեպի ներկա՝ արժեւորելով ներկայի բոլոր գործողությունները»²⁶:

Ժամանակ էր անհրաժեշտ, որ աստիճանաբար ձեւավորվեին նոր մշակույթի ընկալման հոգեւոր- գաղափարական նախադրյալները:

Պատճառներից մեկն էլ այն էր, որ աստվածային խոսքը հասանելի չէր. անհասկանալի էին օտար լեզուները²⁷, եւ մարդը՝ անտարբեր՝ խոսքի ու Եկեղեցու հանդեպ: Ինչպես հավաստում է Բուզանդը, շատերը նոր կրոնը հանձն առան առանց ջերմեռանդ հավատի: Կրոնն ընդունեցին ոչ գիտակցաբար, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր: Միայն քչերը, որոնք փոքրիշատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտությանը, մասամբ հասկանում էին այդ կրոնը: Իսկ ժողովրդի խառնիճաղանջ բազմությունը ոչինչ չէր կարողանում մտքում պահել կամ հասկանալ²⁸:

Բուզանդն արձանագրում է, որ երկրում քարոզչական նպատակներով գործածվող օտար գրերով ազգի հոգեկերտվածքն ու մտածելակերպը փոխելը դյուրին չէր՝ քչերին հասանելի լինելու պատճառով:

Քրիստոնեական արժեքները կարող էին ընկալվել իբրեւ ազգային արժեքներ միայն հայերեն գրի, հայատառ Սուրբ Գրքի ու գրականության միջոցով, այս ճանապարհով կարող էր քրիստոնեությունն ամրապնդվել Հայաստանում²⁹: Մյուս կողմից էլ 387 թվականից Պարսկաստանն ու Բյուզանդիան Հայաստանում լեզվական գործոնի միջոցով վարում էին կրոնագաղափարական ձուլման քաղաքականություն. պաշտոնական հարաբերությունների լեզուն Արեւելյան Հայաստանում պարսկերենն ու ասորերենն էին, Արեւմտյան Հայաստանում՝ հունարենը: Ինչպես գրում է

²⁶ Ս. ԶԱՔԱՐՅԱՆ, Հայոց ինքնության հիմնահարցեր, Երեւան, 2020, էջ 15:

²⁷ Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Հայաստանում հունարենին զուգահեռ կիրառություն է ստանում ասորերենը, 389 թ.՝ Խոսրով արքայի գահընկեցությունից հետո՝ պահլավերենը: Տէս Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ, Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», №2, 2005, էջ 93:

²⁸ Տէս ՓԱՆՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, գլ. ԺԳ., էջ 33:

²⁹ Զ. Ֆրիդրիխը հայերի եւ վրացիների գրերի ի հայտ գալը Ե. դարում ուղղակիորեն կապում է այդ երկու ազգերի՝ քրիստոնեություն ընդունելու հետ: Տէս Ի. Фридрих, История письма, перевод с немецкого, Москва, 2001, էջ 149:

Մ. Աբեղյանը՝ «...հայոց եկեղեցին կորցնում էր իր միությունը եւ թուլանում էր»³⁰: Այս ամենի խոր գիտակցությամբ էլ հայոց գրերի գյուտից հետո ազգային այբուբենը համարվում է աստվածային շնորհ, իսկ Մեսրոպ Մաշտոցը սրբացվում է: Գիրն իրեն վերապահված գործառույթներով ապահովում է հաղորդակցությունն Աստծու եւ մարդկանց միջեւ՝ կատարելով այն առաքելությունը, որը շուտով լիարժեքորեն պիտի իրականացներ զորեղացած Հայ եկեղեցին³¹:

Հանելուկում լուծման առարկան՝ գիրը, անձնավորվելով նույնացել է Մեսրոպ Մաշտոցի հետ: Ձեւավորվել է Աստված եւ շունչ ու ոգի ունեցող գիր հարաբերությունը, որով առավել հստակորեն են դրսևորվել գրի դերն ու նշանակությունը: Ենթադրելի է, որ այս ընկալումը զորեղ ազդեցություն է ունեցել հետագա ստեղծագործողների վրա, եւ այդ է պատճառը, որ չեն հորինվել հանելուկներ գրի գյուտի հետ անմիջականորեն կապված մարդկանց մասին:

Ահա հանելուկն ամբողջությամբ՝ ըստ Ա. Մնացականյանի կազմած բնագրի.

1

Ձեռք Ամենակալին ստեղծ գիս,
Եւ Բարձրեալն ի բարձունս ընծայեաց գիս:

2

Յորժամ ծնաւ գիս մայր իմ
Ես իմաստնացուցի զնա:

3

5

Չափ ամաց իմոց յառաջն էր երկու երկոտասան,
Անեցի եւ զարգացայ, եւ այժմ եմ երեք երկոտասան:

4

Կամ յարեւելս եւ խաւսիմ յարեւմուտս,
Ի հիւսիսոյ ի հարաւ ընթանամ:

³⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ., էջ 97–98:

³¹ Եկեղեցու դերի այս ըմբռնումը գեղարվեստորեն արտահայտվել է նաեւ արվեստում: Ակնեցի բժիշկ Պետրոս Թորմաշյանի՝ 1834 թ. պատրաստած սրբանկարի կենտրոնում Ս. էջմիածինն է, որը երկնքի հետ է կապվում ուղղաձիգ վար իջնող Հայր, Սուրբ Հոգի եւ Քրիստոս Սուրբ Երրորդությունը: Ինչպես մեկնաբանում է Վ. Դեւրիկյանը. «Այստեղ Մայր Տաճարով երկիրը երկնքի հետ է կապվում՝ վերստին Բեթղեհեմյան այրի նման դառնալով երկնքի եւ երկրի հանդիպավայրը». Վ. Դեւրիկյան, Սուրբ էջմիածինը արվեստում, Երեւան, 2015, էջ 48:

- 5
Ի մեռելոց խաւսիմ
10 Եւ յանշնչոց ձայն արձակեմ:
- 6
Մեռեալ եմ
Եւ ընդ կենդանիս խաւսիմ:
- 7
Յանդնդոց ձայն արձակեմ
Եւ առ Բարձրեալն աղաղակեմ:
- 8
15 Ծնունդ իմ՝ ի ջրոյ
Եւ մահ իմ՝ ի նմանէ:
- 9
Ի հրոյ զարհուրիմ եւ ի ջրոյ սասանիմ,
Բայց նստելով ի վէմս՝ արհամարհեմ զնոսա:
- 10
20 Անուն իմ բաղկանայ երիւթ տառիւթ.
Երբեակն ի միակէ,
Երկեակն ի տասնեկէ
Եւ հնգեակն ի հազարէ³²:

981 թվականից մեզ հասած առաջին թղթյա հնագույն ձեռագրում հանելուկը կառուցվածքային բաժանումներ չունի, արձակ շարադրանք է: Նույնիսկ անգեն աչքով երեւում է, որ կազմողը, որը ձեռագրի էջի վերջում եղած ազատ տեղում ավելացրել է հանելուկը մանր տառերով՝ ցանկանալով տեղավորել բաց մնացած հատվածում, չի պահպանել չափածո խոսքին բնորոշ ձևային հատկանիշները³³:

Տարբեր ձեռագրերում տարբեր է հանելուկի միավորների քանակը³⁴: Ա. Մնացականյանը վերականգնել է ամբողջական ծավալը՝ հենվելով ձեռագրային մի քանի տարբերակամբերի վրա: Նա հանելուկը ներ-

³² Ա. Մ. Ա. ՅԱ. ԿԱ. Ն. ՅԱ. Ն., նշ. աշխ., էջ 171–174:

³³ Տե՛ս «Մատենան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, Հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր, 981», նմանահան., 1997, էջ 154ա: Ձեռագիրն ընդօրինակում չէ պատրաստի գաղափարից, այն բովանդակել, այսինքն՝ կազմել է Դավիթ քահանան՝ ստեղծելով տարբեր նյութերից բաղկացած ժողովածու:

³⁴ Ա. Մ. Ա. ՅԱ. ԿԱ. Ն. ՅԱ. Ն., նշ. աշխ., էջ 38:

կայացնում է տնատված. քսաներկու տողերը ամփոփում է տասը տան մեջ՝ փաստարկելով, որ գործ ունենք հանելուկաշարի հետ, որովհետեւ առանձնացված միավորները հորինված են տարբեր տաղաչափությամբ եւ հանգավորումով³⁵: Թեեւ գիտնականն իր կատարած դասավորությունը համարում է «մասամբ պայմանական», բայց նա, ինչպես կտեսնենք ստորեւ, լուծել է հանելուկի իմաստային զարգացման ընթացքը՝ ըստ էության կոահելով հեղինակի գաղափարական նպատակադրումը եւ ընդունելով, որ հանելուկի հորինվածքային հնարանքն արված է չափազանց վարպետորեն. չնայած յուրաքանչյուր հանելուկ համաբնագրից դուրս առանձին կիրառվելու ինքնուրույնություն ունի, եւ որոշ միավորների բացակայությունը չի աղճատում հանելուկի իմաստը, բայց համաբնագրում յուրաքանչյուրն իմաստային կարեւոր օղակ է եւ նպաստում է ներքին զարգացմանը:

Ուսումնասիրողները Դավիթ Քերթոզի հանելուկի տողերը ենթարկել են տարաբնույթ մեկնությունների:

Ըստ Դեւոնդ Ալիշանի՝ Դավիթ Քերթոզին կամ Անհաղթին վերագրված այս հանելուկը «վարպետ եւ խրթին գրուածք» է, որ գրչից գրիչ անցնելով՝ փոփոխությունների է ենթարկվել ծավալի առումով: «Իսկ իմաստը,— գրում է նա,— կէս մը ընդհանուր գրի վրայ, կէս մ'ալ հայերէն գրերուն վրայ յարմարցուցած է...»³⁶: Աստծու ձեռքով տրվելը՝ «Ձեռք Ամենակալին ստեղծ զիս», Դեւոնդ Ալիշանը կապում է Մովսես Խորենացու վկայակոչման հետ, թե Մեսրոպ Մաշտոցը հոգու աչքերով տեսել է տառերի՝ քարի վրա գրվելը Տիրոջ ձեռքով³⁷, իսկ երկրորդ՝ «Եւ Բարձրեալն ի բարձունս ընծայեաց զիս» տողը, ըստ Դեւոնդ Ալիշանի, հիշեցնում է Վարդան պատմիչի բերած ավանդությունը Բալու լեռան վրա գրի հայտնության մասին, թեեւ, ըստ նրա, հնարավոր է, որ ասվածը վերաբերում է նաեւ Մովսեսի «օրինաց տախտակներին»³⁸:

Ն. Ակինյանի ընկալմամբ՝ հանելուկի առաջին տողն արտացոլումն է հին ավանդության, թե «Աստուած գրած է առաջին անգամ նշանագիր գիրը», իսկ երկրորդ տողով ականարկվում են «Մովսէսի տասնաբանեայ

³⁵ Անդ, էջ 39—40:

³⁶ «Բագմավէպ», 1848, թիւ 16, էջ 247:

³⁷ «Եւ տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջը գծին՝ կուտեալ ունէր քարն». ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, նշ. աշխ., էջ 327:

³⁸ «Բագմավէպ», 1848, թիւ 16, էջ 247:

տախտակները եւ կամ խաչի երեքլեզուեան «Սա է արքայն Հրէից (Ղուկ. ԻԳ. 38)»³⁹:

Միանշանակ չեն ընկալվել նաեւ հանելուկի հաջորդ տողերը⁴⁰:

Տասն առանձին միավորները բնութագրում են գիրը, վեր հանում նրա տարբեր հատկանիշները, նկարագրում գործառույթները: Ամբողջապես նրանք ցույց են տալիս գրի ծննդյան եւ ներքին զարգացման ընթացքը:

Հայերեն նշանագրերի ծնունդի մասին Կորյունը գրում է. «Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ Աջովն Իւրով, նշանագիրս հայերէն լեզուին⁴¹»: Հ. Քյոսեյանը Կորյունի՝ սուրբ Աջով տառեր ծնելու վերաբերյալ խորհրդածույթյունը համարում է աստվածաբանական անդրադարձն այն մտայնության, որ կար Արեւելաքրիստոնեական եկեղեցու դավանական փորձառությունից եկող քրիստոսաբանական ընկալման մեջ. նույնացվում են Հայր Աստծու եւ մարմնացած Որդու, մտքի եւ նրա ծնունդը հանդիսացող տառի կամ խոսքի միջեւ եղած հարաբերությունները⁴²:

Այսպես՝ Աստծու կողմից արարվելու, մարմին ու շունչ ստանալու, ոգեղենանալու ընթացքի մեջ գիրն ու նրա առարկայական-կիրառական գործառույթները, Կորյունից սկսած, դիտարկվում են հոգեւոր տիրույթում: Դավիթ Քերթոզի հանելուկը հորինվել է նույն մեկնակետից, որի շնորհիվ հաջորդող դարերում մատենագիրներին՝ հայոց գրի արարման կամ այբուբենի հետ կապված վերաիմաստավորումների ականարկները⁴³ նկատելի են նաեւ այս հանելուկաշարում:

Հանելուկի՝ «Ձեռք Ամենակալին ստեղծ զիս» տողը Կորյունի՝ «սուրբ Աջովն Իւրով» տառերը ծնելու արտահայտություն հետ զուգահեռում գծագրում է վերը բերված հարաբերությունների նույն պատկերը, թեւ առաջին հանելուկում ականարկվում է ոչ թե հայերեն նշանագրերի, այլ առհասարակ գրի ծնունդի մասին:

Հանելուկի երկրորդ տողը հիշեցնում է Աստծուն՝ լեռան բարձունքում գիրը Մովսեսին տալը: Անշուշտ, եթե հանելուկը քննվեր իբրեւ շարքի հետ չառնչվող միավոր, իբրեւ ինքնուրույն ստեղծագործություն,

³⁹ «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1957, թիւ 3–7, էջ 147–150:

⁴⁰ Տե՛ս «Բազմավէպ», 1848, թիւ 16, էջ 247–250. «Հանդէս Ամսօրեայ», 1957, թիւ 3–5, էջ 148–150:

⁴¹ ԿՈՐԻՆՆ, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Ը., էջ 90:

⁴² Տե՛ս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 9:

⁴³ Անդ, էջ 22–34:

կարելի էր ընդունել Ղեւոնդ Ալիշանի դիտարկումը, թե այն վերաբերում է հայոց գրին: Բայց այդ պարագայում կիսարիսլվեր հանելուկի գաղափարական հենքը, հանելուկը կառուցվում է հայոց գրերի աստվածատուր բնույթի ընդգծմամբ՝ այն դնելով Սինա լեռան վրա Մովսեսին տրված Տասնաբանյայի հետ զուգահեռում, որ բանաստեղծորեն պատկերագրում է նաեւ Ներսես Շնորհալին.

Բարեաց պատճառ Հայոց եղեալ,
Զիմաստութեան գանձն խնդրեալ,
Զոր աղօթից մասամբ գտեալ,
Հոգւոյն մատամբ տպաւորեալ,
Ըստ Մովսէսի արժանացեալ,
Զաստուածագիծ տառս ընկալեալ՝
Երիւմ տասամբք վեցիւմ յանգեալ,
Արեգական ելիւմ չափեալ⁴⁴:

Արված զուգահեռի հոգեւոր խորհրդի հանգամանալից լուսաբանումներից մեկը կարողում ենք Վարդան Արեւելցու «Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ Բան գովեստի պատմագրաբար վասն սրբբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց թարգմանչացն» գործում: Նա մեկնաբանում է, որ ամեն ազգ էլ հնարել է իր լեզվի գիրը, բայց միայն այս երկու ժողովուրդներին է գիրն ընծայել Աստված, եւ դա ոչ փոքրագույն պատիվ էր մեր ազգի համար. ինչպես որ հներից միայն Իսրայելը պատվվեց աստվածագիծ տախտակներով, այնպես նորերի մեջ միայն Հայաստանին տրվեց աստվածատուր պարգեւը: Եւ քանի որ Աստված սովոր է միջնորդի ձեռքով բարին պարգեւելու ազգի մարդկանց, ինչպես նախամարգարե Մովսեսին տվեց աստվածագիծ տախտակները, որով հասան գիտության ճշմարտությանը, այնպես Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով շնորհեց գիրը, որով գերծ մնացինք տգիտության խավարից եւ ճանաչեցինք ճշմարիտ աստվածգիտության լույսը⁴⁵:

Հանելուկաշարի երկրորդ հանելուկում արծարծվում է գրի միջոցով աշխարհը ճանաչելու խնդիրը. գիրը ծնող գրիչն իմաստնանում է, որովհետեւ նրա շնորհիվ ավելին է իմանում: Ասվածը հարաբերվում է «Յաճախապատում»-ի այն մտքի հետ, որ Աստված աշխարհն ստեղծել է որ-

⁴⁴ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, Քննական բնագիրը պատրաստեց, ծանոթագրեց եւ առաջաբանը գրեց Մանիկ Մկրտչյանը, Երեւան, 1981, էջ 95–96:

⁴⁵ «Բանբեր Մատենադարանի», 1964, թ. 7, էջ 395–396:

պես դպրոց եւ ապա հորինել դպրութեան գրերը՝ արարվածներին քննելու համար. «Զի կարգեաց Աստուած զաշխարհս որպէս դպրոց. զի ուսցին արարածք զխնամս Արարչին յառնելն եւ ի կազմելն, եւ միշտ նախախնամութեամբ նորա զարմանեալք որ երեւին եւ որ ոչն երեւին»⁴⁶:

Երրորդ հանելուկն ազգարարում է հայերեն նշանագրերի ծնունդը: Հանելուկում ասվում է, որ հայոց այբուբենի տառերը նախ 24 են եղել՝ երկու տասներկու, ապա ստեղծվել է 12-ի երրորդ եռյակը, եւ նոր դարձել է 36 գիր: Հայոց այբուբենի մշակվածութեան բարձր մակարդակը շեշտվում է «աճեցի եւ զարգացա» բառերով՝ նկատի ունենալով նաեւ թվական առավելությունը 24 գրից բաղկացած հունական այբուբենից⁴⁷:

Չորրորդ հանելուկը, ուր խոսվում է գրի՝ Արեւելքում գտնվելու եւ Արեւմուտքի հետ խոսելու, հյուսիսից հարավ ընթանալու մասին, հոգեւոր առումով՝ տարածական սահմաններում չպարփակվող գրի՝ մարդկանց մոտեցնելու եւ մարդկությանը միավորելու ուժն է ակնարկում:

Որոշ հանելուկներում ամփոփված հոգեւոր խորհուրդներին անդրադարձել է Վ. Դեւրիկյանը: 5-րդ հանելուկի մասին գրականագետն այն միտքն է արտահայտում, որ նրանում արծարծվում է գրի՝ հոգեւոր կենդանություն հաղորդելը մեռյալ նյութին⁴⁸: Մեռյալ կաշին մագաղաթն է. գիրը գրվում է մեռյալ կաշվի վրա, որով մեռյալների միջից է խոսում, եւ երբ ընթերցում են, անշունչ կաշվից ձայն է արձակում:

Հաջորդ երկու տողերը (6-րդ հանելուկ) նույն այս մտքի կրկնությունն են: Դրոշմված լինելով մեռյալ կաշվի վրա՝ գիրը ողջ եղողների հետ է խոսում:

⁴⁶ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, Յաճախապատում ճառք լուսաւորք, յառաջ., համեմ. եւ ծանօթ.՝ Ա. Տէր-Միքէլեանի, Ս. Էջմիածին, 1894, Ճառ է., տող 23–26, էջ 68–69:

⁴⁷ 24 թվի կապակցությամբ արծարծվել են տարբեր կարծիքներ: Ղեւոնդ Ալիշանը կարծում է, որ ասվածը վերաբերում է թե՛ օտար ազգերի 24 գրերին, որոնց համեմատությամբ մեր այբուբենն ավելացավ, թե՛ հայոց՝ ենթադրելով, որ Դանիելյան գրերը 24-ն էին: Տէս «Բազմավէպ», 1848, թիւ 16, էջ 248: Ն. Ակինյանը գրում է, որ հեղինակն այս տողերով «կը յիշէ յունական այբաբետը 24 նշանագիրներով, որ հիմք եղաւ Հայկականին»: Տէս «Հանդէս Ամսօրեայ», 1957, թիւ 3–5, էջ 149: Դանիելյան նշանագրերի խնդիրը եւ արտահայտված տեսակետները հանգամանորեն քննել է Հ. Աճառյանը. տէս Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց գրերը, Երեւան, 1984: Ավելի ուշ Ա. Մուշեղյանը կարծիք է արտահայտում, որ հայոց նոր այբուբենն ստեղծելիս Մեսրոպ Մաշտոցն օգտվել է հայոց հին այբուբենից մնացած 24 նշանագրերից, որ գտել էր Դանիել Ասորին. տէս «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թ. 2, էջ 229:

⁴⁸ Տէս Վ. ԴԵՒՐԻԿՅԱՆ, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Ա., Վենետիկից Հռոմ (16-րդ դար), 2012, Երեւան, էջ 6:

13–14-րդ տողերը (7-րդ հանելուկ) անդունդներից Աստծուն ուղղվող մարդկային խոսքի մասին են:

5-րդ, 6-րդ եւ 7-րդ հանելուկները փոխկապակցված են արտահայտած գաղափարով. մեռյալների միջից եմ խոսում եւ անշնչացածների միջից եմ ձայն արձակում. մեռած եմ եւ ողջերի հետ եմ խոսում. անդունդից եմ ձայն արձակում եւ դեպի Բարձրյալն եմ աղաղակում, այսինքն՝ մարդ իր հոգու խորքից առ Աստված է առաքում իր խոսքը, ինչպես որ Նարեկացին է ասում. «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Ուրեմն գրին վերապահված է այս եւ այն աշխարհների, երկրի եւ երկնքի, մարդու եւ Աստծու միջեւ կապ հաստատելու դեր՝ ուժն ու խորհուրդը Աստված—գիր հարաբերության:

Հաջորդ հանելուկում գիրը ներկայացնում է, որ ջրից է ծնվել, եւ իր մահը նույնպես ջրից է: Հանելուկի՝ ջրից ծնվելու եւ ջրից մեռնելու գաղափարական իմաստը, ըստ Վ. Դերիկյանի, նույնպես պայմանավորված է միջնադարյան աշխարհայեցողությամբ, այն իմաստով, «...որ ջուրն է ամենայն ինչի նախասկիզբը եւ արարվելով արարչագործությունը՝ կենդանություն պարգեւեց երկրին: Սկզբի եւ վերջի իրավահաջորդ ըմբռնմամբ՝ նաեւ ջրով եղավ ջրհեղեղը, որը միաժամանակ դարձավ թե՛ հնի վերջը եւ թե՛ սկիզբը մի նոր սկզբի, եւ շարունակական նորոգության այս ընթացքի հետ է հարաբերվում նաեւ գիրը»⁴⁹:

Գրի այս խորհրդի գիտակցումով էլ ծնվել են Մեսրոպ Մաշտոցի շուրջ հյուսված հրաշապատում ավանդությունները քարից ջուր բխեցնելու մասին՝ Մեսրոպ Մաշտոցի ազգային-լուսավորական գործունեությունը գնահատելով ջուր—կյանք—սկիզբ գաղափարական նույն մեկնակետից⁵⁰:

9-րդ հանելուկում գիրն իր մասին ասում է, որ հրից զարհուրում եւ ջրից սասանվում է, բայց երբ փորագրվում է քարին, դրանցից չի վախենում: Հանելուկը, իբրեւ նախորդի շարունակություն, գրի՝ վեմի վրա գրվելուց հետո հուրն ու ջուրն արհամարհելը մարդու ենթագիտակցական մակարդակում ստեղծում է աղերս առաքելական հիմքի՝ վեմ-հավատի վրա բարձրացած հոգեւոր կառույցի եւ նրա որմերին դրոշմված անշնչելի գրերի միջեւ՝ հուշելով, որ հեղինակի համար հայկական գրի միտումը՝ քրիստոնեությունը հայացնելու, ամրակայելու այն ժողովրդի

⁴⁹ Անդ:

⁵⁰ Տե՛ս Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, Ավանդապատում, 1969, Երեւան, էջ 95, 235:

գիտակցություն մեջ, այլեւս անսասան իրողություն է եղել հանելուկը գրելու ժամանակ:

Հանելուկաշարի պատասխանը վերջին՝ 10-րդ բանաստեղծության շորս տողերում է, որոնցում ներկայացվում է «գիր» բառի թվային խորհուրդը. անունը բաղկացած է երեք տառից. առաջինի թվային համարժեքը երեքն է, երկրորդինը՝ քսանը, իսկ երրորդինը՝ հինգ հազարը:

Վ. Դեւրիկյանն այս հանելուկը համարում է «գիր» անվանման եւ հայոց միջնադարում նրա մեկնաբանման հոգեւոր խորհրդի խտացումը: Նա գրում է. «Գ.-ի թվային արժեքը երեքն է, որի համար Հայոց միջնադարում հոգեւոր մեծ խորհուրդ է հաղորդվել «գիր» բառին, թե ոչ միայն Հայոց գիրն է աստվածատուր, այլեւ «գիր» անվանումն իսկ: Այն թե՛ այս հանելուկում եւ թե՛ միջնադարյան մի շարք այլ բնագրերում մեկնաբանվել է հետեւյալ ձևով. «գիր» բառը կազմված է երեք տառից, որոնք մեկ իմաստ են արտահայտում, ինչպես որ Սուրբ Երրորդությունն է կազմված երեք անձից՝ Հայր, Որդի ու Սուրբ Հոգի, եւ միաժամանակ միասնական ու անբաժանելի մի ամբողջություն է՝ որպես մեկ միություն: Երեք գրերով՝ երրորդությամբ մի ամբողջություն կազմելն առավել է ընդգծվում նաեւ այն հանգամանքով, որ ոչ միայն «գիր» բառն է կազմված Սուրբ Երրորդությունը խորհրդանշող երեք տառերով, այլեւ այս բառի առաջին տառի՝ Գ.-ի թվային համարժեքն է երեքը, որի համար այս հանելուկում ասվում է. « Երեքակն ի միակէ⁵¹»:

Հանելուկը, այսպիսով, փառաբանություն է Ամենակալին. նրա ձեռքով արարված «գիր» բառն անգամ խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը, ավելին՝ կրկնակիորեն է արտահայտում Երրորդության գաղափարը:

Ա. Մնացականյանի կարծիքով՝ հանելուկաշարի որոշ հանելուկներ շոր են եւ զուսպ, բայց մյուսները գրքի ու գրի կախարդական ուժը փառաբանող դրվատանքներ են, հանելուկ-գովքեր⁵²: Ակնհայտ է, սակայն, որ ամբողջ հանելուկաշարն է գրված ներբողական ոգով: Նույնիսկ դիպաշարային առումով այն որոշակիորեն պահպանել է ներբողի ժանրի տիպաբանորեն կայուն հատկանիշները՝ նախաբան՝ առաջադիր նյութի ներբողման հիմնավորմամբ, բուն նյութ՝ առանձին մասերի դրվատմամբ, եւ վերջաբան՝ խնդրվածքներով, մաղթանքներով⁵³, որովհետեւ, ինչպես

⁵¹ Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, Հայ գիրքը աշխարհի..., էջ 8:

⁵² ՏԵՄ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ. էջ 47:

⁵³ ՏԵՄ «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», էջ 139, 148:

ստեղծագործության քննությունից տեսանելի դարձավ, առանձին հանելուկներ իմաստային առումով ներքին խմբավորումներ են կազմում: Հանելուկն իբրեւ ամբողջական համաբնագիր ընկալված լինելու պատճառներից մեկն էլ հավանաբար սա է:

Առաջին հանելուկը՝ իբրեւ նախաբան, վսեմ ոճով ազդարարում է աստվածային բնույթ ունեցող գրի ծնունդը հենց իր՝ գրի կողմից, 2-րդ հանելուկով մատնանշվում է գրի՝ իրեն ծնողին՝ գրչին, իմաստնացնել կարողանալու գործառույթը, որով արտահայտվում է հանելուկը հորինողի վերաբերմունքը գրի դերին ու նշանակությանը: Բուն նյութը նախ 3-րդ եւ 4-րդ հանելուկների միջոցով ներկայացնում է գրի արտաքին հատկանիշները՝ 36 տառից բաղկացած լինելը, ժամանակի ու տարածության մեջ անարգել շարժվելու կարողությունը՝ իբրեւ հաղորդակցության գործիք, ապա մյուս հանելուկներով բացահայտում գրի ներքին հատկանիշները՝ հոգեւոր վերածնության (5-րդ, 6-րդ եւ 7-րդ հանելուկներ), հոգեւոր ամրության, անսասանության խորհուրդները (8-րդ, 9-րդ հանելուկներ): Ապա հաջորդում է փառատրական վերջաբանը (10-րդ հանելուկը)՝ իբրեւ օրհնաբանություն ներբողվող գրի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորապես գնահատելով հայոց գրի դերը քրիստոնեության տարածման, մասնավորապես մարդկանց գիտակցության մեջ նոր գաղափարախոսության ամրակայման գործում՝ Դավիթ Քերթոզը հանելուկաշարում շեշտում է հայոց այբուբենի աստվածատուր լինելը՝ նրա ծնունդը գիտարկելով հինկտակարանային պատումի հետ զուգահեռում (Տասնաբանյա աստվածաշունչ պատվիրանների տրվելը Մովսեսին)՝ իբրեւ նույն աստվածային գրից ծագած իրողություն: Եթե Կորյունը գրում է ներբողյան վարք՝ Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց գրի գյուտի մասին, ապա Դավիթ Քերթոզը հյուսում է տասն առանձին միավորներից բաղկացած, բայց իմաստային առումով փոխկապակցված ներբողյան հանելուկ՝ նվիրված հայոց գրին: Ներբող-հանելուկում նախ բացահայտվում են գրի գործառույթներն ուղիղ, առարկայական իմաստով, ապա այդ հիմքի վրա, արժեւորելով գրի գյուտն իբրեւ Աստծու շնորհ, այլաբանորեն գծագրվում է գրի հոգեւոր խորհուրդը: Մարմնավորվում է գիրը եւ կատարելով իրեն վերապահված դերը՝ իր հզոր ներուժով մարդկանց մոտեցնում է Աստծուն:

РЕЗЮМЕ

В V веке с изобретением армянской письменности было положено начало масштабной просветительской деятельности, в результате которой развились культура и наука, Армянская церковь стала самостоятельной и независимой. Параллельно с переводной литературой было создано одно из первых произведений отечественной агиографии — «Житие Маштоца» Корюна, как хвалебное жизнеописание, ода. Летописцы, вслед за Корюном, перенимают его понимание изобретения письменности одаренной Богом. Начиная с 5 века, история изобретения письменности подвергается национально-духовному переосмыслению. Первая письменная серия армянских загадок (V—VI века) также посвящена национальному письму. Размышления о божественном появлении письменности в серии загадок свое начало берут непосредственно из книги Корюна: письменность и ее предметно-прикладные функции рассматриваются в духовной сфере, с осознанием роли армянской письменности в деле распространения христианства и утверждения новой идеологии в сознании людей. Каждая загадка является важным смысловым звеном в тексте и способствует внутреннему развитию произведения, даже отдельные загадки образуют внутренние группировки по смыслу. Как целостный текст серия загадок в какой-то степени сохранила типологически устойчивые черты жанра оды. Серия загадок — одическое произведение, посвященное письмам.

SUMMARY

In the 5th century, with the creation of the Armenian alphabet, a large-scale educational activity was launched, which resulted in the development of culture and science; the Armenian Church became independent and autonomous. In parallel with the translated literature, one of the first works of native hagiography, the «Life of Mashtots» by Koryun, was created as a laudatory biography, an ode. The chroniclers following Koryun adopted his comprehension of the creation of the God-given writing. From the 5th century onwards, the history of the creation of writing has undergone a national-spiritual reinterpretation. The first written Armenian riddle series (5th – 6th centuries) is also dedicated to the writing. Reflections on the divine origin of the writing in the riddle series are derived directly from the book of Koryun:

writing and its subject-applied functions are considered in the spiritual sphere, with an awareness of the role of the Armenian writing in the spread of Christianity and the establishment of a new ideology in the minds of people. Each riddle is an important semantic link in the text and contributes to the internal development of the work; even individual riddles form internal groupings in terms of meaning. As a coherent text, the riddle series have, to some extent, retained the typologically stable features of the ode genre. The riddle series is odic, dedicated to the writing and expresses the idea of the Holy Trinity: the Armenian word for the writing is made up of three letters symbolizing the Holy Trinity.

